Ծրագիրը

2008 թվականին Գերմանիայի Դաշնային Հանրապետության **Արտաքին գործերի նախարարությունը** սկսեց «Դպրոցներ՝ ապագայի գործընկեր» (PASCH) նախաձեռնությունը, որի նպատակն էր խթանել արտերկրի դպրոցների հետ համագործակցությունը, և գերմաներենը՝ որպես օտար լեզու, դարձնել ուսումնական ծրագրերի անբաժանելի մաս տարբեր երկրներում: **Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության** (DAAD) կողմից կազմակերպված՝ «Արտասահմանյան և գործընկեր գերմանական դպրոցներին աջակցելու ծրագիրը»-ը (BIDS) հանդիսանում է PASH նախաձեռնության անբաժանելի մասը:

BIDS ծրագիրը նպաստում է բուհերի համագործակցությանը գերմանական արտասահմանյան և լեզվի դիպլոմ տրամադրող դպրոցների հետ: Այդ կերպ DAAD-ը, ի թիվս այլոց, աջակցում է նաև մեր BIDS ծրագրին:

Այս շրջանակում **Վիադրինա Եվրոպական համալսարանը** (EUV) համագործակցում է հատկապես արտասահմանյան և լեզվի դիպլոմ տրամադրող դպրոցների հետ՝ Հայաստանում, Բուլղարիայում, Վրաստանում, Լեհաստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում:

Ինչու՞ է BIDS-ը քեզ համար հետաքրքիր

- ✓ **Դու դեռ չգիտե՞ս, թե՝**
  - ➢ **Որտե՞ղ ես ցանկանում սկսել ուսումդ,**
  - ➢ **Ի՞նչ ես ուզում սովորել:**

  Մենք օգնում ենք քեզ կողմնորոշվել և խրախուսում ենք Բրանդենբուրգում սովորելու քո որոշումը:
- ✓ **Քեզ անհրաժե՞շտ է աջակցություն քո ուսման մեկ-նարկի համար:**

  Մենք քո կողքին ենք մեր խորհրդատվական և աջակցության ծառայություններով:
- ✓ **Քեզ անհրաժե՞շտ է ֆինանսական աջակցություն:**

  Դիմի՛ր մեր մոտիվացիոն կրթաթոշակի համար:

Տեղեկատվություն

Վիադրինա Եվրոպական համալսարան

Գրանցման և հարցերի համար

կոնտակտային անձ՝

Maria Krug-Firstbrook

BIDS նախագծի համակարգող՝

bids@europa-uni.de

Große Scharrnstraße 59

15230 Frankfurt (Oder)

Թարմացված է՝ 2025թ գարուն

BIDS

Europa-Universität Viadrina

Արտասահմանյան և գործընկեր գերմանական դպրոցներին աջակցելու ծրագիր

©Wiktoria Skowron

EUROPA-UNIVERSITÄT VIADRINA FRANKFURT (ODER)

DAAD Deutscher Akademischer Austauschdienst German Academic Exchange Service

Համալսարանը

Ֆրանկֆուրտի (Օդեր) Վիադրինա Եվրոպական համալսարանը, որը գտնվում է գերմանա-լեհական սահմանին, իր 4000 ուսանողներին առաջարկում է միջառարկայական ծրագրեր մշակութաբանության, տնտեսագիտության և իրավագիտության ոլորտներում:

Փոքր լսարանային դասընթացները ժամանակակից պայմաններում մեծ ներդրում ունեն ուսման հաջողության գործում: Համալսարանի միջազգային ուղղվածությունը, իր օտար լեզուների դասընթացների լայն առաջարկով և երկու կամ երեք պետական որակավորման հնարավորությամբ ամեն տարի դեպի Օդեր է գրավում գերմանիայից և արտերկրից բազմաթիվ ուսանողների:

©Heide Fest

Մեր ուսումնական առաջարկները

Տնտեսագիտական ֆակուլտետ

- Միջազգային բիզնես-կառավարման բակալավր
- International Business Administration (անգլերեն)
- Իրավունք և տնտեսագիտություն
- Ֆինանսատնտեսական վերահսկում (երկակի ուս. ծրագիր)

Իրավաբանական ֆակուլտետ

- Գերմանական իրավունք (9 կիսամյակ)
- Կրկնակի դիպլոմ՝ գերմանական - լեհական իրավունք
- Իրավունքի և տնտեսագիտության բակալավր
- Իրավունքի և քաղաքականության բակալավր
- Գերմանական և լեհական իրավունքի բակալավր և մագիստրատուրա

Մշակութաբանության ֆակուլտետ

- Մշակութաբանության բակալավր

Հատուկ ուղղություններ՝ մշակույթի պատմություն, գրականություն, լեզվաբանություն, համեմատական հասարակագիտություն

- Մշակութային և հասարակագիտական ուսումնասիրությունների բակալավր (անգլերեն)
- Իրավունք և քաղաքականության բակալավր
- Լեհագիտության բակալավր

©Maria Krug-Firstbrook

BIDS Փորձնական ուսուցում

Մենք աշակերտներին հրավիրում ենք Ֆրանկֆուրտ (Օդեր) քաղաք, որպեսզի նրանք անձամբ կարողանան ծանոթանալ «**Վիադրինա»** համալսարանին:

Փորձնական ուսուցման ընթացքում Վիադրինայի Եվրոպական համալսարանը հոգում է ճանապարհորդության, սննդի և գիշերակացի ծախսերը:

2008 թվականից ի վեր մենք ամեն տարի ընդունում ենք **PASCH-դպրոցների** ավագ դասարանների աշակերտներին: Մեկ շաբաթ տևող բազմաբնույթ փորձնական ծրագրի ընթացքում ապագա շրջանավարտները հնարավորություն են ստանում անմիջապես ծանոթանալու մեր համալսարանի առօրյային և տեղեկանալու Վիադրինայի բազմաբնույթ ուսումնական առաջարկներին:

Գրանցման և հարցումների համար՝ bids@europa-uni.de

Լրացուցիչ տեղեկություններ՝ https://www.europa-uni.de/de/internationalitaet/incoming/studieninteressierte/bids-internationale-partnerschulen/index.html

Մենք աշակերտներին տալիս ենք հնարավորություն.

- բացահայտել համալսարանի կամպուսը և շրջակայքը Ֆրանկֆուրտ (Օդեր) և Սլուբիցե քաղաքներում,
- ծանոթանալ մեր ուսումնական ծրագրերի լայն շրջանակին,
- մասնակցել ակադեմիական դասընթացներին,
- հանդիպել ուսանողների հետ,
- կապ հաստատել աշխարհի տարբեր երկրներից ժամանած դասախոսների և ուսանողների հետ,
- մասնակցել միջմշակութային սեմինարներին և գրողների վարպետաց դասերին,
- մասնակցել էքսկուրսիաներին և Բեռլինում իրականացվող մշակութային ծրագրին

BIDS Մոտիվացիոն կրթաթոշակ

Բրանդենբուրգում ուսանելը արժե: PASCH դպրոցների շրջանավարտների համար ուսումը մեր համալսարանում սկսելը հեշտացնելու նպատակով մենք ցանկանում ենք աջակցել նրանց ուսման մեկնարկի ժամանակ:

Այդ նպատակով **Վիադրինան** կրթաթոշակ է տրամադրում օտարերկրյա PASCH դպրոցների բարձր առաջադիմությամբ և նպատակասլաց շրջանավարտներին:

Արագ տեղեկություն մոտիվացիոն կրթաթոշակի մասին

- Կրթաթոշակի չափը՝ ամսական 450 եվրո,
- Տևողությունը՝ 1-ին կիսամյակ, հնարավոր է երկարաձգում,
- Դիմելու ամբողջական տեղեկատվությունը կարող եք գտնել Վիադրինայի կայքում

Կրթաթոշակները ֆինանսավորվում են Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) և Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության միջոցներով:

Խորհրդատվություն և աջակցություն

Մենք տեղեկություններ ենք տրամադրում PASCH դպրոցներում և կրթական ցուցահանդեսներում՝ Վիադրինայի Եվրոպական համալսարանի մասին: Դպրոցական դասարանները միշտ ողջունելի են, և մենք հաճույքով տրամադրում ենք տեղեկատվական նյութեր: Բացի այդ, մենք աջակցում ենք արտասահմանյան և լեզվի դիպլոմ տրամադրող գերմանական դպրոցների աշակերտներին մասնագիտության ընտրության,

©Maria Krug-Firstbrook